

Գևորգ Գ. Հակոբյան

ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Փիլիսոփայական խնդրադաշտի համատեքստում*

Բանալի բառեր – պիտոյական, սխալներ, մատնացույց անել/չանել, սխալի տարածում և/կամ ամրակայում, պարադոքսալ իրավիճակ, հարացույց, բառ, լեզու, բառարանագիր, բառարանագրություն:

Մուտք

Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեն, Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքի համաձայն, մասնակցում է լեզվաքաղաքականության մշակմանն ու իրականացմանը¹, ինչը «պետության կամ պետությունների միավորումների կամ էլ հասարակական ազդեցիկ հաստատությունների (երբեմն նաև հզոր անհատների) իրականացրած միջոցների համակարգն է, որի նպատակը այս կամ այն լեզվի կարգավիճակի և կառուցվածքի պահպանումն է (կամ փոփոխությունը)»²: Ուստի Լեզվի կոմիտեն, լինելով լեզվաքաղաքականության հիմնական գործողը, զբաղվում է նաև լեզվաքաղաքականությամբ և հաճախ մատնացույց անում լեզվական այն սխալները, որոնք տեղ են գտնում հանրային խոսույթում:

Սակայն հասարակությունն այս գործընթացին միշտ չէ, որ դրական է վերաբերվում. ինչպես Լեզվի կոմիտեն, այնպես էլ այլ խմբեր ու անհատներ, որոնք մատնացույց են անում արդի հայերեն

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2022:

1 Տե՛ս «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120963> (մուտք՝ 18.02.2022):

2 Գյուրջինյան Դ. Ս., «Լեզվաքաղաքականություն» եզրույթի ընդհանուր բնութագիրը, «Լեզվաբանական տերմինաբանության հարցեր»: Հանրապետական գիտաժողովի նյութեր (25 հոկտեմբեր, 2019), պրակ Ա, Եր., 2020, էջ 52-53:

խոսքում հանդիպող սխալները, հաճախ են քննադատվում: Քննադատողները պնդում են, որ լեզվական սխալի վերաբարձումը (թեև մերժելու և վերացնելու նպատակով) կարող է նպաստել դրա տարածմանը և/կամ ամրակայմանը: Ըստ նրանց՝ նախ՝ նշված սխալը անփույթ ընթերցողի ենթագիտակցության մեջ կարող է տպավորվել որպես ճիշտ տարբերակ, երկրորդ՝ սխալը կարող է գիտակցաբար պատճենվել որպես նորաձևություն, յուրօրինակություն կամ էլ ենթա(հակա)մշակութային ընդվզում և այլն:

Այս նկատառումներն ունեն ակնհայտ հիմք և ապացուցման կարիք չեն զգում: Ավելին՝ խնդիրն այնքան նուրբ է ու կարևոր, որ փորձառու մասնագետները հատուկ միջոցներ են ձեռնարկում կանխարգելելու այսօրինակ հնարավոր վտանգները: Այդ կանխարգելող միջոցները, ի թիվս այլ աշխատությունների, հստակ ներկայացվում են Դ. Գյուրջինյանի «Հանուն մեր նյարդերի: Գրառումներ հայոց լեզվի այսօրվա խնդիրների մասին» գրքույկում, որում խստագույնս կարևորվում է տեսողական հիշողության գործոնը: Ինչպես հեղինակն է նշում, աշխատանքում «ճիշտ կամ հանձնարարելի բառերը և ձևերը սովորաբար մեծատառով են գրվում, որ աչքի ընկնեն և մտապահվեն (միայն որոշ դեպքերում մեծատառ է գրվել զուտ տարբերակման նպատակով): Իսկ սխալ կամ մերժելի ձևերը, ընդհակառակը, հատուկ չեն գատվում»³:

Այսպես՝ հասկանալի է՝ ամեն քննադատության չէ, որ պետք է և/կամ հնարավոր է անդրադառնալ, բայց միևնույն փաստի վրա կառուցարկված և, ինչպես կասեր Ի. Կանտը, հոգածությամբ ճշտված ու բարեմիտ գաղափարներն անպատասխան թողնելը բանականության հանրային օգտագործման արհեստական խաթարում է, որը դեմ է դեպի լուսավորություն շարժվելու ազնիվ ձգտմանը⁴: Բացի այն, որ վերը նշված քննադատության համար իրականում հիմքեր կան, այսպիսի «քննադատությունը կարող է լինել կարևոր, լուսաբանող և նույնիսկ արդյունավետ՝ թեև չլինելով հիմնավոր. այն փաստարկը, որը կիրառվում է ինչ-որ անհիմն քննադատություն հերքելու համար,

3 Գյուրջինյան Դ. Ա., Հանուն մեր նյարդերի: Գրառումներ հայոց լեզվի այսօրվա խնդիրների մասին, Եր., «Էդիթ Պրինտ», 2019, էջ 4:

4 Հմմտ. Կանտ Ի., Պատասխան հարցին՝ ի՞նչ է լուսավորականությունը, «Հայաստանը Եվրոպայի ճանապարհին, Ինքնություն 2», Եր., «Անտարես», 2005, էջ 141:

կարող է նոր լույս սփռել տեսության վրա և օգտագործվել որպես (ստուգիչ) փաստարկ հոգուտ վերջինիս...»⁵:

1. Հիմնախնդրի էությունը

Հաշվի առնելով այս հակադրամիասնությունը՝ պետք է ձևակերպել խնդիրը համակողմանիորեն բացահայտող և դրա հնարավոր լուծման համար մեկնակետ հանդիսացող հարցեր. արդյոք կարելի՞ է և/կամ պիտոյակա՞ն է հանրային խոսույթում հանդիպող սխալներն ի ցույց դնելը, թե՞ ճիշտ հակառակը՝ հարկավոր է դրանք անտեսել, մատնել մոռացության՝ գիտակցելով, որ սխալի հիշատակումը կարող է կենսունակություն հաղորդել դրան⁶:

Հատկանշական է, որ պարադոքսալ այս իրադրությունը միայն լեզվի ոլորտում չէ, որովհետև չկա և չի էլ կարող լինել մի այնպիսի արատավոր երևույթ, որը և՛ թաքցնելը, և՛ բացահայտելը դժվարհաղթահարելի բարդություններ չառաջացնեն: Ուստի այս իրադրությունը այս կամ այն ձևով առկա է կամ հնարավոր մարդկային կյանքի բոլոր բնագավառներում՝ ցանկացած անարդար, կեղծ, տգեղ և այլ (բարոյական, ճանաչողական ու գեղագիտական դիտանկյուններից) մերժելի երևույթների առնչակցությամբ: Եվ դա պարզորոշ երևում է հոգևոր մշակույթի բոլոր ձևերի, մասնավորապես՝ արվեստների կոչումն ու նպատակները քննարկելիս: Օրինակ՝ հանրահայտ փաստ է, որ դասական համարվող կինոբեմադրող Պ. Պազոլինին «շատ հաճախ էկրան է բարձրացնում աշխարհում եղած գարշելի իրողությունները (սա Թեոդոր Ադորնոյի պահանջն է ամեն արվեստից՝ մատնացույց անել կյանքում առկա գարշելի իրողությունները, որոնց հաղորդակից լինելով՝ արվեստընկալը կցնցվի)»⁷: Հանրահայտ է նաև այն փաստը, որ բազմաթիվ են հոգևոր մշակույթի այն գործիչները, որոնք անհիշելի ժամանակներից մարդկությանը ցնցելու և սթափեցնելու նպատակով ցուցադրել և/կամ խրախուսել են գարշելի տեսարանների ցուցադրու-

5 Popper K. R., The open Society and Its Enemies / Addenda, Princeton, Princeton University Press, 2013, p. 495.

6 Սույն վերլուծությամբ արժարժվող խնդիրներին հեղինակն անդրադարձել է Լեզվի կոմիտեի և Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի 2021 թ. հուլիսի 8-9-ը կազմակերպած «Արդի բառարանագրության խնդիրներն ու հեռանկարը» խորագրով գիտաժողովին:

7 Հակոբյան Պ. Պ., A poria, «Անդրեյ Տարկովսկի, հողվածների ժողովածու», Եր., Հեղինակային հրատ., 2013, էջ 33-34:

մը: Այս ամենի նպատակը միշտ էլ եղել ու մնում է նույնը՝ հիվանդ մարդկության ցանկալի ապաքինումը՝ անկախ նրանից, թե ինչ է ըմբռնվում **հիվանդ** և **ապաքինում** ասելով: Եվ այստեղ ծագում են արդարացի հարցեր. արդյոք առաջարկվող միջոցներն ավելի վատառողջ չե՞ն դարձնում մարդկությանը, բացառվո՞ւմ է արդյոք, որ հենց Պազուլինիի (կամ Կաֆկայի և այլոց⁸) հաղորդած ցնցումները հիվանդացնեն մարդկությանը՝ հաճույք պատճառելով գարշանքի մոլուցքով տառապողներին և/կամ ուրիշներին վարակելով նույն մոլուցքով: Իսկ մի՞թե անհավանական է, որ գարշանքի ցուցադրումը (էկրանավորումը, պատկերումը, շարադրումը) կլեգիտիմացնի դրա գոյությունը՝ մարդկությանը «առողջացնելու» այդ միջոցները վերածելով իրենց իսկ հակադիրներին⁹: Հասկանալի է, որ ո՛չ:

Բնավ պատահական չէ, որ Պողոս առաքյալը, քննարկելով Օրենքի ու շնորհի հարաբերության խնդիրը, հայտարարում է. «... ես չէի իմանա, թե ի՛նչ է մեղքը, եթե Օրենքը չհայտնե՞ր դա: Օրինակ՝ չէի իմանա, թե ի՛նչ է ցանկությունը, եթե Օրենքը չասե՞ր՝ «մի՛ ցանկացիր»»: Մեղքը, առիթից օգտվելով, պատվիրանի միջոցով ամեն տեսակ ցանկությունն առաջացրեց իմ մեջ, եթե Օրենքը չլիներ, մեղքը մեռած կմնար: Կար ժամանակ, որ ես էլ կենդանի էի, երբ Օրենքը չկար, բայց երբ պատվիրանը եկավ, մեղքը կյանք առավ, իսկ ես մեղքով մեռա: Այսպես, ուրեմն, այն պատվիրանը, որ ինձ կյանք պետք է տար, մահվան պատճառ եղավ ինձ համար, որովհետև մեղքը, պարզապես առիթից օգտվելով, պատվիրանի միջոցով խաբեց ինձ և դրանով էլ սպանեց: Հետևաբար, օրենքը ինքը սուրբ է, պատվիրանն էլ սուրբ է, արդար է ու բարի (Հռոմ. 7:7-12)»¹⁰: Երկարաշունչ այս մեջբերումը ակնհայտորեն արտահայտում է տեղեկույթը հանրայնացնելու մեծ վտանգը՝ հստակ մատնացույց անելով նաև այդ տեղեկույթի (այս դեպքում՝ Օրենքի պատվիրանի) բարի նպատակը: Այսպիսով՝ հստակ

8 Հմմտ. **Адорно Т. Л. В.**, Эстетическая теория, М., «Республика», 2001, էջ 21-26:

9 Այս հարցադրումները կարող են ունենալ բազմապիսի հիմնավորումներ, սակայն դեռևս 1750 թ. Դիժոնի ակադեմիայի առաջարկած մրցութ-հարցադրման գոյությունը («Նպատե՞լ է արդյոք բարքերի բարելավմանը գիտությունների և արվեստների վերածնունդը») լիովին բավարար է, որ սույն հարցադրումները համանմանության մեթոդով լիովին արդարացի համարվեն: Ի դեպ, մրցություն հաղթել է աշխարհահռչակ փիլիսոփա Ժ.-ժ. Ռուսոն հարցին տալով բացասական պատասխան (տես **Руссо Ж.-Ж.**, Рассуждение о науках и искусствах, Способствовало ли возрождение наук и искусств улучшению нравов?, «Историко-педагогический журнал», Нижний Тагил, Научное издание ФГБОУ ВПО, Нижнетагильская государственная социально-педагогическая академия, 2012, N 2, էջ 54-79):

10 Աստվածաշունչ, Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի և Սաղմոսներ, Աշխարհաբար նոր թարգմանություն, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, Եր., 2007:

է, որ պետք է առնվազն խնդրահարույց համարել բոլոր այն պնդումները (և դրանց ցուցումով կատարվող գործողությունները), որոնք նպատակաուղղված են բացահայտորեն ու կրկնօրինաբար տեղեկույթ մատուցելու հասարակությանը աշխարհում գոյություն ունեցող և/կամ հնարավոր անընդունելի երևույթների մասին:

Հակասական այս իրավիճակը նաև խիստ գործնական է, որն առավել ակնհայտ է դառնում, երբ վերաբերում է ողբերգական դեպքերին: Օրինակ՝ ինքնասպանության (սուիցիդալ) հոգեբանության հայտնի ճշմարտություն է, որ ինքնասպանության դեպքերի մասին տեղեկույթ տարածելը խիստ վտանգավոր է. այդպիսի տեղեկության առկայությունը ավելի է մեծացնում ինքնակազմաքանդիչ (աուտոդեստրուկտիվ) գործողությունների դիմելու հավանականությունը, երբ անձը հոգեկանի օրհնական, սահմանային վիճակում է: Ինքնասպանության դեպքերի մասին մեծածավալ տեղեկությունների առկայությունը հնարավոր պայմաններից և/կամ առնվազն առիթներից (կամ էլ նույնիսկ պատճառներից) մեկն է, որը դրդում է ինքնասպանություն գործելու: Այդպիսի (մեծ ծավալի և/կամ հաճախակի ստացվող) տեղեկությունը կարող է մարդուն ստիպել, որ ինքնասպանությունը դիտարկի որպես «յուրահատուկ միջոց, որն օգնում է ազատվել անտանելի հոգեկան ցավից և միանալ նրան, ով հավերժ լքել է այս աշխարհը»¹¹: Հավանականությունն առավել մեծ է, որ անձը կհակվի ինքնասպանություն գործածին նմանակելուն, երբ գիտե, որ կա «կյանքի ծանր իրադրությունից դուրս գալու «արդարացված ելք»»¹²: Այսինքն՝ կարելի է պնդել, որ ինքնասպանության մասին տեղեկույթի բացակայությունը չի երաշխավորում ինքնասպանության դեպքերի վերացումը, բայց դրա առկայությունը մեծացնում է ինքնասպանության հավանականությունը: Հետևաբար հանձնարարելի է, որ ինչպես ԶԼՄ-ները, այնպես էլ տեղեկություն տարածող բոլոր հնարավոր գործողները խուսափեն ինքնասպանության դեպքերին անդրադառնալուց: Բայց ինքնասպանության դեպքերը (դրական և/կամ բացասական միջոցներով) ծածուկ պահելը նույնպես հղի է մեծ վտանգներով. անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը բազմաթիվ են պարտադրված ինքնասպանության դեպքերը, որոնց դրդող անձինք մնա-

11 Վարդանյան Կ. Ե., Պարտադրված սուիցիդներ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», Եր., ԵՊՀ հրատ., 2020, N 3 (33), էջ 59:
12 Նույն տեղում, էջ 52:

ցել ու մնում են անպատիժ: Իսկ պատժի և/կամ դրա մասին տեղեկության բացակայությունը նպաստում է անընդունելի դեպքերի կրկնությանը: Ճշմարիտ է, որ «ինքնասպանները դժբախտ մարդիկ են, իսկ ինքնասպանությունը անձի բողոքն է ոչ միայն հասարակության, այլև կյանքի նկատմամբ: Պարտադրված ինքնասպանությունը մահվան ձգտում չէ, այլ նման ձևով ապրել չկարողանալու արտահայտություն կամ ծայրահեղ իրադրությունից դուրս գալու «ոչ լավագույն ելք»»¹³: Իսկ ինքնասպանությամբ օգնության կանչող մարդուց բացի՝ նման դրության մեջ հայտնված այլ մարդու գոյության բացառումը առնվազն իրատեսական չէ: Հետևաբար ինքնասպանությամբ բողոք բարձրացրած զոհի ձայնը (միտումնավոր) խլացնելը կնշանակի նպաստել այդ սոսկալի իրողության բազմացմանը: Եվ բնավ պատահական չէ, որ ինքնասպանության թեման լայնորեն քննարկվում է հոգևոր մշակույթի գրեթե բոլոր ձևերում, իսկ էքզիստենցիալիզմի շրջանակներում պարզապես առանցքային է: Այսու՝ պնդել, որ հանձնարարելի չէ ինքնասպանության մասին տեղեկույթը թաքցնելը, նույնպես փաստարկված է:

Այսպիսով՝ հիմնավորված է այն պնդումը, որ ինքնասպանությանը վերաբերող տեղեկույթ տարածել չի կարելի, բայց այս պնդման հակադեմ՝ ինքնասպանության մասին տեղեկույթը թաքցնել պահանջող դատողությունը նույնպես հիմնավորված է: Այսինքն՝ ինքնասպանության դեպքերը հանրայնացնելու (կամ թաքցնելու) խնդիրը ենթադրում է մեկից ավելի միմյանց փոխբացառող լուծումների լեգիտիմ համակեցություն, որն իրական կյանքում ստեղծում է փակուղիներ:

Պատկերը լիովին նույնն է պատերազմների առումով. պատերազմական դրության մեջ գտնվող հասարակությանը դրության մասին իրազեկելը, բացի թշնամական հետախուզությանն օգնելուց, հանգեցնում է հասարակական խոր հիասթափության և պարտվողական տրամադրությունների: Իսկ սրանց էլ, ամենայն հավանականությամբ, հետևում են խուճապը և, ի վերջո, իրական պարտությունը: Սակայն իրականության կոծկումն էլ, ի թիվս այլ վնասների, մղում է անհոգության և անիրատեսական հավակնությունների, որոնց էլ կրկին հետևում են աղետալի դեպքեր: Ուստի կարելի է լիովին հիմնավորված համարել այն պնդումը, թե պատերազմող պետության քաղաքա-

13 Նույն տեղում, էջ 60:

ցիները պետք է քաջատեղյակ լինեն իրադրությանը, բայց նույնքան հիմնավոր է նաև սրան հակադիր այն պնդումը, թե քաղաքացիներին հարկավոր է իրազեկել ընտրողաբար, կամ, որ նույնն է, պետք չէ ողջ ձշմարտությունը հայտնել բոլոր քաղաքացիներին:

2. Հիմնախնդրի փիլիսոփայական էությունը

Այս բոլոր փաստերի ու փաստարկների համադրումից պարզ է դառնում, որ անընդունելի երևույթը հանրայնացնել/չհանրայնացնելու պիտոյականության խնդիրը համընդհանրական է, որովհետև կանոնավոր կերպով արտարկվում է (էքստրապոլյացիա) մի ոլորտից կանայական այլ ոլորտ: Բացի այդ՝ պարզվում է նաև, որ խնդիրը հավերժական է ու անհրաժեշտաբար վերարձարծելի, որովհետև այն ենթադրում է մեկից ավելի փոխբացառող ու համակեցող լուծումներ: Իսկ այն խնդիրը, որը համընդհանրական է, հավերժական և անհրաժեշտաբար վերարձարծելի, տիպիկ փիլիսոփայական է¹⁴:

Ամփոփելով միջանկյալ այս դիտարկումը՝ հավելենք, որ լեզվական սխալները մատնացույց անել/չանելու խնդրի գոյաբանական հիմքն անընդունելի երևույթները հանրայնացնել/չհանրայնացնելու պիտոյականության հիմնախնդիրն է, որի համանմանությամբ ու նույն սխեմայով էլ գործառում է լեզվականը: Իսկ սա նշանակում է, որ լեզվական սխալներին առնչվող խնդիրը, լինելով փիլիսոփայական-արժեքանական (աքսիոլոգիական) հիմնախնդրի մասնավոր դեպք, երբեք չի կարող վերջնական լուծում ստանալ: Մասնավոր այս խնդրի ցանկացած լուծում, որքան էլ կանոնավոր, յուրօրինակ, համակողմանի, ձշգրիտ լինի, միևնույն է, մասնակի է, տեղային, ժամանակավոր և միշտ ենթակա վերանայման: Ինքնին պարզ է, որ ինչ-որ առումով մշտապես վերանայման է ենթակա ցանկացած խնդրի ցանկացած լուծում, բայց փիլիսոփայական հիմնախնդրից մեկնարկող, միևնույն սխեմայով գործառող և մասնավոր ոլորտում լուծում գտնող խնդիրը հարատև և անընդհատ է ենթակա ու ենթարկվում վերանայման¹⁵:

14 Փիլիսոփայական հիմնախնդրի էական առանձնահատկությունների մասին տե՛ս **Манасян А. С.**, Методологические принципы объективности научного знания и единство науки, Ер., «Гитутюн», 2002, էջ 8:

15 Հմմտ. «...տեսական արձանագումը արգելակում է **իրավունքի** և **քաղաքականության** կառուցարկման հետագա ընթացքը՝ ելակետվելով կարիքի բացակայությունից: Սրանք հետադուր դիտվում են ամբողջական ու կուռ համակարգեր և սկսում են գործառել որպես ակնհայտ «ինքնին»

3. Հիմնախնդրի կոնկրետացում (բառարանագրություն)

Վերադառնալով լեզվական սխալները մատնացույց անել/չանելու հարցադրմանը՝ նշենք, որ սխալի հանրայնացման արգելքը միևնույն սկզբունքով ու նպատակով պետք է տարածվի բոլորի վրա՝ անկախ նրանից՝ սխալը մատնացույց է անում Լեզվի կոմիտեի համապատասխան աշխատակիցը, սոցիալական ցանցի ինչ-որ օգտատեր, թե հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Բայց սխալը հանրայնացնելու արգելքը կամ խրախուսանքը նախ և առաջ պետք է վերաբերել բառարանագրության ոլորտին, որովհետև լեզվական հարցերում բառարանն արդարացիորեն ունի շատ մեծ հեղինակություն:

Լեզվի ոլորտում բառարանի կողմնորոշիչ ու հարացուցային հեղինակությունը, որը պայմանավորված է բառի էությամբ, ո՛չ պատահական է, ո՛չ էլ խոտելի: Որովհետև, ինչպես իրավացիորեն նկատում է Կ. Փոփերը, բառը, հոգեբանության տեսանկյունից, մի նշան է, որի նշանակությունն ամրակայվում է կիրառության, ավանդույթի կամ գուգորդման միջոցով: Այդ նշանակությունն ամրագրվում է, երբ անձը սկսում է կիրառել բառը և ձևայնացնել լեզվական իր սովորություններն ու գուգորդումները: Իսկ տրամաբանության տեսանկյունից՝ բառը կոնվենցիոնալ մի նշան է, որի նշանակությունն ամրագրվում է ինչ-որ նախասկզբնական որոշմամբ, նախնական որոշարկման կամ համաձայնության մի տեսակ հասարակական դաշինքի միջոցով: Եվ լայն տարածում գտած այն կարծիքը, ըստ որի՝ բառերի ձգգրիտ իմաստները գտնվում են դրանց նախնական նշանակություններում, բավական հիմնավորված է: «Հետևաբար,– պնդում է Փոփերը,– եթե մենք ինչ-որ բառ հասկանում ենք, ապա հասկանում ենք, որովհետև դա սովորել ենք ձգգրտությամբ ճիշտ հեղինակությունից՝ մեկից, որն այդ լեզուն գի-

հասկանալի ճշմարտություններ»: Պատմական այս ակնթարթում իրավական և քաղաքական «ինքնին հասկանալի ճշմարտությունները» միակողմանիորեն ինքնամեկուսանում են **փիլիսոփայությունից**: Բայց **փիլիսոփայությունը** շարունակում է հայեցողության կենտրոնում պահել **իրավաքաղաքական** արձանագացած (արձանագրված) այս հայեցակետերը: Համապատասխան «օրենսգրքում» և հասարակական գիտակցության մեջ արձանագացած «ինքնին հասկանալի» այսօրինակ բանաձևումները **փիլիսոփայությունը** ենթարկում է վերանայման ու վերափմաստավորման, այսինքն **վերափմաստասիրման**: Վերափմաստասիրման այս գործընթացը շարունակվում է, որովհետև փիլիսոփայության համար չկա մեկընդմիջտ լուծված հիմնախնդիր. ցանկացած լուծում կամ միշտ ենթակա է չեղարկման, կամ ուղղակի ընդունելի չէ, որովհետև առկա է մեկ այլ՝ լիովին հակադիր տեսակետ» (**Հակոբյան Գ. Գ.**, Փիլիսոփայության և իրավաքաղաքական խոսույթի կապը, «Գիտական հոդվածների ժողովածու», գիրք 10 (02), Եր., ԵՀ հրատ., 2019, էջ 311-312):

տե: Սրանից բխում է, որ բառի նշանակության խնդիրը իրապես կապված է հեղինակավոր աղբյուրի խնդրին...»¹⁶:

Փոփերյան այս եզրակացությունը բացարձակ ճշմարտություն չէ և ենթակա է վիճարկման: Բայց որ դրանում կա ճշմարտության զգալի բաժին, որով էլ արձանագրվում է լեզվական հարցերում աղբյուրի հեղինակության համակարգաստեղծ լինելը, կասկածից վեր է: Կասկածից վեր է նաև այն, որ բառարանը լեզվի բնագավառի հեղինակություն է, փոփերյան ոճով ասած՝ տվյալ լեզուն իմացողը: Ուստի սխալներն ի ցույց դնել/չդնելու խնդիրը կարելի է առնչակցել նաև բառարանագրությանը: Այսինքն՝ պետք է հստակ հարց տրվի՝ պե՞տք է արդյոք, որ բառարանում արտացոլվեն լեզվական սխալներ, թե՞ բառարանագիրը պետք է միտումնավոր չանդրադառնա դրանց: Հարցադրման առնչակցումը բառարանագրությանը կարելի է լիովին հիմնավորված համարել՝ մանավանդ հաշվի առնելով, որ հենց բառարանագիրներն են նկատում բառարանների (հեղինակություն)՝ «սրբութիւն մը եւ ճշգրտութեան ու ճշմարտութեան ցոլորան մը» լինելը և կարևորությունն այն բանի, որ «ո՛չ միայն ինք զերծ ըլլայ սխալներէ, այլ նաեւ չցուացնէ այն վրէպներն ու սխալները՝ որոնք կը յամենան մեր լեզուին մէջ եւ կարծէք քաղաքացիական իրաւունք ձեռք ձգած են...»¹⁷:

Լեզվական սխալների ցուցադրումը բառարաններում.

որոշ օրինակներ: Բառարանագրության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, երբ հեղինակը մատնացույց է անում լեզվական ինչ-որ սխալ՝ նախաբանում տեղեկացնելով դրանց առկայության մասին¹⁸: Կան նաև դեպքեր, երբ հեղինակը ցույց է տալիս այն պայմաններն ու պատճառները, որոնցից ծագում է տվյալ սխալը: Օրինակ՝ Է.

16 Popper K. R., Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge, New York, London, Basic Books, 1962, p. 19.

17 Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ. եւ Տօնիկեան Փ. Կ., Յառաջաբան, «Հայոց լեզուի նոր բառարան», Պէյրուք, «Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն», 1968, էջ 4 (կետ 5):

18 Տե՛ս Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նախադրումը, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. առաջին, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836, էջ 8: Հայկազյան բառարանը հայ բառարանագրության մեջ եղել ու մնում է օրինակելի նմուշ, ուստի բնավ պատահական չէ, որ դրա օրինակով հայ բառարանագիրները մատնացույց են անում լեզվական սխալներ չփաստարկելով դրա ցանկալիության օգտին: Սակայն կան նաև դեպքեր, երբ բառարանագիրները փորձում են հիմնավորել բառարանում լեզվական սխալն ի ցույց դնելը, օրինակ՝ «Մեր լեզուին մէջ (եւ խօսակցական, եւ գրական) սպորդած եւ շփոթ ստեղծած սխալներու շուրջ ճշդումներ կատարած ենք, որովհետեւ կը հաւատանք, որ բառարան մը միայն բառազանձ չէ, այլ նաեւ ուղեցոյց մը, այլ բառով դասագիրք մը...» (Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ. եւ Տօնիկեան Փ. Կ., Յառաջաբան, էջ 4 (կետ 5)):

Աղայանն իր «Արդի հայերենի բացատրական բառարանում» ներկայացնում է բառապաշարին վերաբերող մի տեսություն, որի շրջանակներում արդի գրական հայերենի բառապաշարը քննում է ըստ բառամթերային շերտերի: Հեղինակը բառերի բնութագրական տեսակներից մեկն անվանում է **կեղծ գրական բառեր** և մատնացույց անում լեզվական բազմաթիվ սխալներ՝ ի ցույց դնելով ինչպես սխալ բառայթ, այնպես էլ դրան առնչվող այլ հանգամանքներ¹⁹: Բայց բառարանագրի՝ լեզվական սխալների ցուցադրումն այսքանով չի սահմանափակվում. տեսության մեջ հիշատակվող սխալ բառայթներն ամբողջությամբ տրված են բառարանի բառացանկում որպես գլխաբառեր, որոնց դիմաց դրված է **տե՛ս** ցուցումը: Այս ցուցումը, ըստ բառարանի բառապաշարի բառագիտական հեղինակային մշակման, նշանակում է, թե տվյալ «բառի գործածությունը կամ տվյալ նշանակությունը մերժվում է՝ արդի հայերենի այժմյան գրական նորմայի հիման վրա»²⁰: Օրինակ՝ բառարանում որպես գլխաբառեր տրված են ՀԱՐԸՆՉԱԿԱՆ-ը և ՀԱՐԸՆՉՈՒԹՅՈՒՆ-ը, որոնք համակցված են համապատասխան նշանով (յ), որին էլ հաջորդում է տե՛ս-ը, իսկ սրան էլ՝ ճիշտ ձևերը (Հարնչական, Հարնչություն): Կամ, որ նույնն է, որպես գլխաբառեր տրված են ՀԱՐԹՈՒԿ-ը, ՀԱՐԹՈՒԿԱՐԱՆ-ը, ՀԱՐԹՈՒԿԵԼ-ը, որոնց դիմաց՝ ցուցումից հետո, գրված են ճիշտ ձևերը (Արդուկ, Արդուկարան, Արդուկել):

Բառարանի այսպիսի կառուցվածքը կարող է շատ արդյունավետ լինել ինչպես բառարանի օգտագործման, այնպես էլ տարածված լեզվական սխալները վեր հանելու և վերացնելու համար: Սակայն հենց այս նույն կառուցվածքը կարող է նաև խառնաշփոթ ստեղծել, որը սերտորեն առնչվում է լեզվական սխալների ամրակայմանը և տարածմանը: Նախ՝ տվյալ բառայթին անծանոթ ընթերցողը, հանդիպելով տե՛ս ցուցումին, թեև պետք է որ հասկանա, որ տվյալ գլխաբառի գործածությունն ընդունելի չէ, սակայն չի կարողանա պարզորոշ տարբերակել, թե ինչու է այն մերժելի՝ բարբառային է, գեղեկաբանությո՞ւն է, սխալ է, թե՞ մեկ այլ պատճառ կա: Եվ երկրորդ, որ ավելի կարևոր է, ընթերցողը, իմանալով բառայթի

19 Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 1, Եր., «Հայաստան», 1976, էջ XII: Հատկանշական է, որ հեղինակը լեզվական սխալներ է ի ցույց դնում նաև տողատակ(եր)ում (տե՛ս, օրինակ, նույն տեղում, էջ XI) մանրակրկիտ բացատրություններ տալով, իր իսկ բնորոշմամբ, մասսայական ընթերցողին:

20 Նույն տեղում, էջ XV:

միայն սխալ տարբերակը, կարող է փնտրել ու գտնել այն որպես գլխաբառ՝ տրված այն բառույթների կողքին, որոնք ընդունելի են ու ճիշտ:

Բառացանկի այս դասավորվածությունը միայն անփորձ կամ անփույթ ընթերցողին չէ, որ կարող է շփոթեցնել ու նրա հիշողության մեջ ձձմարիտի փոխարեն սխալը տպավորել, այլև հենց մասնագետներին: Որովհետև դասագրքային ձձմարտություն է, որ գիտակցությունը միշտ չէ, որ վերահսկում է (տարբերակում է ձձմարիտը ոչ ձձմարիտից) ընկալման գործընթացն ու արդյունքները, մասնավորապես, երբ ուշադրությունը կենտրոնացված է ինչ-որ օբյեկտի վրա, իսկ մեկ այլ օբյեկտ ընկալվում է զուգահեռաբար՝ դուրս ուշադրության կենտրոնացվածությամբ ընկալումից: Իսկ այսպիսի ընկալում բառարանի օգտագործման դեպքում հավանական է գրեթե միշտ, որովհետև բառարանի միևնույն էջում զետեղված են լինում մի շարք գլխաբառեր, և ընթերցողի ուշադրությունը բնականաբար կենտրոնանում է դրանցից միայն մեկի վրա, իսկ մյուսները նա ընկալում է զուգահեռաբար՝ դուրս ուշադրության վերահսկողությունից:

Է. Աղայանի բառարանը, իհարկե, միակը չէ, որ լեզվական սխալներ է ի ցույց դնում, բայց նման բառարանների մեջ ակնկալվող ճիշտ բառույթի տեղում ու փոխարենն ոչ համապատասխան գլխաբառ գրելու հարցում ամենայնօրինակը թերևս Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ն է: Թե լեզվական ինչ ծավալի և բազմաշերտ սխալներ է ցուցադրում Աճառյանն իր այս աշխատությամբ, կարելի է պարզորոշ պատկերացնել՝ միայն աչքի անցկացնելով բառարանի նախաբանը, որում հեղինակը հանգամանալից բացատրում է, թե ինչպես, ինչու և ինչ նպատակով են բառարանում արտացոլվում այս կամ այն սխալները, և/կամ իր օգտագործած աղբյուրներից որոնք ու որքանով են վստահելի և այլն:

Աճառյանը հանգամանորեն բացատրում է, թե ինչպես պետք է օգտվել բառարանից՝ հատուկ անդրադառնալով այն բառույթներին, որոնք (բառարանում գրված ձևով) չպետք է գլխաբառ լինեին, բայց գլխաբառ են դարձել: Դրանք նախ այն բառերն են, որոնք արմատ չեն, բայց «ընթերցողների դիւրութեան համար դրուած են ար-

մատների շարքը»²¹: Երկրորդ՝ կան գլխաբառեր, որոնք հեղինակությունների և/կամ ավանդույթի ազդեցությամբ ներկայացված են սխալ գրությամբ²²: Եվ վերջապես՝ բառարանում տեղ են գտել նաև այնպիսի գլխաբառեր, որոնք պարզապես գոյություն չունեն, ինչպես Աճառյանն է ասում, սուտ ու շինծու բառեր են և տարբերակելի են պայմանական նշանով ([])²³:

Այս իրավիճակն ու դրա պատճառները Աճառյանը բացատրում է (ի թիվս այլոց)՝ օրինակ բերելով հայերենում առկա **բորկոնիմ**, **բորկունիմ**, **բարկէնիմ** («փուշ» իմաստով) ձևերը: Հեղինակը համոզված է, որ այս ձևերից ճշգրիտը («լավագույնը») **բարկէնիմ**-ն է, սակայն գլխաբառ է դարձրել **բորկունիմ**-ը՝ տեղի տալով «մեր լեզուի մէջ ընդունուած պաշտօնական»²⁴ ձևին: Բայց սա հարցի ամենախնդրահարույց մասը չէ: Այն ավելի է բարդանում **երիզ** բառի առումով: Աճառյանը վստահ է, որ «**երիզ** բառ չկայ. պէտք է լինի **երէզ**: Բայց ես ստիպուած էի գրել **երիզ**, որովհետև այս է ընդունուած լեզուի մէջ: Եթե բառը դնէի երէզ ձևով, ընթերցողը, որ բառը փնտռում է իր և ամէնքի գիտեցած ձևով և ո՛չ թէ իմ իմացածով, անշուշտ չպիտի գտնէր այն»²⁵: Այսինքն՝ քանի որ սխալ բառաձևի տարածվածության ճնշման տակ ճիշտ ձևն ստվերվել է, բառարանագիրը սխալ բառաձևը ստիպված դրել է ակնկալվող ճիշտ գլխաբառի տեղում, որպեսզի բառարանը կիրառելի լինի:

Աճառյանական այս հնարի գործադրումը, թեև լիովին արդարացնելի է, սակայն չի դադարում վտանգավոր լինելուց՝ լեզվական սխալներ տարածելու և տարածվածներն ամրակայելու առումով: Մանավանդ որ այդ սխալ բառույթները, գրվելով գլխաբառերի փոխարեն և ինքնըստինքյան կրկին քողարկվելով, առնվազն մինչև ընթերցողի՝ դրանց մասին բացատրությունն ընթերցելը փաստացի դադարում են բացահայտված «սուտ ու շինծու բառեր» լինելուց: Միևնույն ժամանակ, սակայն, դրանք սխալի, կեղծի կամ ստի էլ չեն վերածվում, քանի որ հեղինակը ո՛չ սխալվել է, ո՛չ գոյություն չունեցողը ներկայացրել որպես իրական, ո՛չ էլ միտումնավոր թաքցրել

21 **Աճառյան Հ. Հ.**, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971, էջ 13:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 6, 13-14:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 14:

24 Նույն տեղում, էջ 6:

25 Նույն տեղում:

դրանց իսկական էությունը: Հետևաբար հայտնի էլ չէ, թե իմացաբանական ինչ բնութագրման են համապատասխանում այդ՝ նախկինում սուտ ու շինծու, հետո բացահայտված, հետո կրկին քողարկված, բայց քողարկումը չթաքցնող բառաձևերը²⁶: Եվ բնավ պատահական չէ, որ բառընտրության այս խնդիրները Աճառյանը համարում է «ծանր»²⁷:

Հատկանշական է, որ բառարանագիրները բառընտրության գործընթացում կանգնում են նաև այսպիսի երկընտրանքների առաջ, որոնք, լինելով գուտ լեզվական, միաժամանակ նաև կենցաղային, հասարակական, քաղաքական բնույթի են: Օրինակ՝ բազմաթիվ բառարաններում կան ոճական այնպիսի նշումներ, որոնք ընթերցողին հաղորդում են ինչ-որ բառախմբի՝ գոեհկաբանություն, սնահավատական կամ հայիոյական լինելը, մինչդեռ կան բառեր, որոնց այդպիսին լինելը ո՛չ որոշարկված է, ո՛չ էլ հնարավոր է վերջնականորեն որոշարկել: Այսպես՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» «Բառերի հորինվածքը» ուղեցուցային համակարգում նշվում է, որ բառարանի բառային կազմ չեն ներառվել «անպատշաճ և հայիոյական բառերը»²⁸: Այս ցուցումից, իհարկե, չի կարելի եզրակացնել, թե ամեն չընդգրկված բառ անպատշաճ ու հայիոյական է (բառարանն այլ սահմանափակումներ էլ ունի), որովհետև թեև ամեն անպատշաճ ու հայիոյական բառ դուրս է թողնվել, բայց ամեն դուրս թողնված բառ չէ, որ անպատշաճ ու հայիոյական է: Սակայն հարց է առաջանում՝ ինչպես և որտեղից կարող են ընթերցողները (և հասարակությունն ընդհանրապես) իմանալ, թե որ բառերն են անպատշաճ և հայիոյական: Հասկանալի է՝ կան ավանդույթի ուժով հայիոյական համարվող բառեր և արտահայտություններ, սակայն ավանդական և գիտական պնդումները միշտ չէ, որ համընկնում են հավաստիությամբ: Կամ՝ ի՞նչ հիմնավորմամբ է ինչ-որ բառ համարվում հայիոյական և դուրս թողնվում գիտական տեքստից, եթե տվյալ բառի իմաստը գիտական (բանասիրական, մշակութաբանական, հոգեբանական) վերլուծության չի ենթարկվել:

26 Սխալի, կեղծի, ստի և ճշմարիտի այլ հակոտնյանների մասին տես **Հակոբյան Գ. Գ.**, Կորոնավիրուսային համավարակի խոսույթի իմացաբանական որակման շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի Փիլիսոփայություն, հոգեբանություն», Եր., ԵՊՀ հրատ., 2021, N 1 (34), էջ 46-47:

27 Տես **Աճառյան Հ. Հ.**, նշվ. աշխ., էջ 6:

28 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1969, էջ VII:

Կարելի է վստահ պնդել, որ բառարանագիրը չի կարող չգիտակցել գիտական հիմնավորության այս բացը, սակայն կարո՞ղ է արդյոք, ասենք, խորհրդային գրաքննություն անցնող բառարանում արտացոլվել ավանդաբար հայհոյական համարվող բառի մեկնաբանություն: Մա մի հակասական իրողություն է, որը ինչպես ժամանակին, այնպես էլ ներկայումս կարող է վնասել բառարանագրությանը: Բառընտրության ու բառույթի բացատրության գործընթացը փակուղային իրավիճակում է հայտնվում նաև աշխարհայացքային դեպքերի առնչությամբ: Այս առումով տիպական է Ս. Մալխասյանցի՝ **հոգի** բառի բացատրությունը, որում նաև նշվում է. «(Կրօն.) **Աննիթ՝ անտեսանելի էակ:** Ըստ սնահաւատութեան հրեշտակները՝ դևերը հոգիներ էին համարվում»²⁹: Այն, որ մարտնչող աթեիստական սոցիալ-քաղաքական միջավայրում հեղինակն այլ տարբերակ չուներ (թեև հեղինակն ինքն էլ կարող էր սրան համամիտ լինել), քան կրոնական բոլոր հավատալիքները «սին» հայտարարելը, առնվազն գրաքննության արգելքը հաղթահարելու համար, ինքնին հասկանալի է: Բայց լիովին հասկանալի է նաև այն, որ Մալխասյանցի նման գիտնականը պարզապես չէր կարող չիմանալ, որ աննիթ և անտեսանելի էակների գոյության/չգոյության մասին պնդումները ոչ միայն լեզվաբանության տիրույթից են դուրս, այլև ընդհանրապես ռացիոնալի սահմաններից³⁰: Եվ բառահողվածի խնդիրը ոչ թե աշխարհայացքային և/կամ նեղ կուսակցական դիրքորոշման (ան)ուղղակի ջատագովումն է, այլ բառաձևի էության բացահայտումը: Պարզ է, որ գիտնականը կարող էր խուսափել հասարակական-քաղաքական խնդիրներից՝ **հոգի** բառը չներառելով բառացանկ, սակայն խնդրի այսպիսի լուծումն ավելի ոչ գիտական կլիներ, քան փիլիսոփայական-կրոնաքաղաքական, թեև անպատասխանատու այնպիսի հայտարարությունը, որը թելադրում էր օրվա քաղաքական (նաև հասարակական) իշխանությունը³¹: Բացի այդ՝ կրոնական կամ այլ բնույթի «սկանդալային» բառույթների թիվն այնքան մեծ է (բոլոր բառույթներն էլ ինչ-որ համատեքստում կարող են դառնալ այդպիսին), որ դժվարության հաղթահարման այս եղանակը կհանգեցնե

29 Մալխասյանց Ս. Ս., Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ 123:

30 Մալխասյանցի մասին այս պնդման ապացույցը տես Մալխասյանց Ս. Ս., Առաջաբան, «Հայերեն բացատրական բառարան», հատ. 1, Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատ., 1944, էջ ԺԵ-ԺԶ:

31 Հմտ. նույն տեղում, էջ 2 (տիտղոսաթերթի ծոնը), ԺԸ (կետ 3), Ի, ԻԱ, ԻԲ և այլն:

բառամթերքի՝ մինչև բառարանի գոյության անիմաստության աստիճանի կրճատման:

Օրվա սոցիալ-քաղաքական իշխանության թելադրանքով առաջնորդվելը (թեև հանուն գիտության, մասնավորապես՝ հայերենագիտության)³² շատ ավելի մեծ վտանգներով կարող է հղի լինել, քան միայն իմացաբանական բարեվարքության պահանջների խախտումն է: Այսպես, օրինակ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» օգտագործման կարգն ուղեցուցում է, որ **«Տե՛ս նշումը գերազանցապես գործածվում է այն բառերի ու իմաստների մոտ, որոնց կիրառությունը գրական լեզվի համար հանձնարարելի չէ: Միաժամանակ այդ նշումը դրվում է արևմտահայ այն բառերի, ձևերի ու իմաստների մոտ, որոնք արևելահայերենում սովորական չեն»**³³: Բառարանի կառուցման այսպիսի ձևը վտանգավոր է մի քանի առումներով: Նախ՝ այն արդի հայերենի երկու գոյավիճակների միջև ստեղծում կամ խորացնում է եղած անջրպետը, որի ամրակայման պիտոյականության օգտին ոչ մի փաստարկ չկա: Թեև եղած կամ հնարավոր անջրպետը վերացնելու կամ ուղղորդելու օգտին էլ կարող է փաստարկ չլինել, բայց դա բնավ չի նշանակում, թե առաջինն արդարացված է. չի բացառվում, որ առավել նախընտրելի լինի հայերենի այս երկու ճյուղերի փոխներթափանցումը³⁴: Ուստի չարժե հիմնավորված համարել արևմտահայերենի որոշ բառերի ու բառաձևերի գրանցումն այն բառերի ու իմաստների շարքում, որոնք գրական լեզվի համար անհանձնարարելի են: Երկրորդ՝ այս նշումն ընթերցողին ուղղորդում է, որ նույնացնի (առնվազն ենթագիտակցաբար) անհանձնարարելի և արևմտահայերեն բառաձևերը, իսկ անհանձնարարելի վարմունքն ու վարմունքի հեղինակը, գոնե առօրեական գիտակցության մեջ, հաճախ նույնանում և դառնում են միևնույն վերաբերմունքի հասցեատերերը: Հետևաբար բնավ չի բացառվում, որ բառարանի կառուցման այս ձևը գործակից լինի արևելահայերենի ու արևմտահայերենի լեզվակիր-

32 Խիստ կարևոր է գիտակցելը, որ մշակութային գործիչների զիջումներն օրվա իշխանություններին մեծ մասամբ ու առաջին հերթին թելադրված են լինում տվյալ ոլորտի զարգացմամբ, այլ ոչ թե անձնական շահով: Մասնավորապես հայերենագիտությունը, որը խորհրդային իշխանությունները երկար ժամանակ պահում էին ուշադրության կենտրոնում, չէր կարող զարգանալ, եթե շատ գիտնականներ ինչ-ինչ զիջումների կամ նույնիսկ խորամանկության չդիմեին:

33 «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», էջ VIII:

34 Հմտ. **Գյուրջիյան Ղ. Ս.**, Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., «Գիտություն», 2021, N 2 (662), էջ 232:

ների միջև հատվածայնություն սերմանելուն, մանավանդ որ լիովին հավանական է Լ. Վիտգենշտայնի հայտնի ասույթի ձշմարիտ լինելը, ըստ որի՝ լեզվակրի և նրա աշխարհի սահմանագծերը միշտ նույնական են³⁵:

Եզրակացություններ

Համադրելով վերը քննարկված փաստերն ու փաստարկները՝ կարելի է պնդել, որ բառարանագիրները հաճախ են ի ցույց դնում լեզվական սխալները և հաճախ էլ հարկ չեն համարում անդրադառնալ դրանց: Ուստի բառարանագիրների համար լեզվական սխալների ցուցադրումը լիովին ընդունելի է ու սովորական: Բայց ինչպես նկատվեց, լեզվական սխալները ցուցադրելուն ընդդիմացողների մտահոգություններն էլ անտեղի չեն: Ուստի կարելի է եզրակացնել, որ կա մի խնդիր, որը ոչ միայն զգալիորեն բարդացնում է բառարանագրի աշխատանքը, այլև բառարանագրության գործընթացը երբեմն կանգնեցնում է փակուղային իրավիճակների առաջ: Այդ իրավիճակները ծագում են, որովհետև առկա խնդիրը կարելի է դասել պարադոքսների (կամ որոշ վերապահումներով՝ գենոնյան ապորիաների, կանտյան անտինոմիաների) շարքը: Իսկ սա նշանակում է, որ խնդրի հնարավոր լուծումը կարող է լինել առավելագույնը պայմանական (կոնվենցիոնալ): Եվ եթե հաշվի առնենք այն ակնհայտ փաստը, որ (հայոց) լեզվի զարգացման արագության և ուղղության հարցում բառարանագրությունն ունի էական նշանակություն, ապա կարելի է պնդել, որ առկա խնդրի անտեսումն անթույլատրելի է: Հետևաբար հրամայական է դառնում լեզվաբանների և այս խնդրին անմիջականորեն առնչվող այլ գիտնականների փոխհամաձայնության ձեռքբերումը: Ընդ որում, այստեղ էականը ոչ թե այդ հնարավոր համաձայնության առկայությունն է, այլ դրա հստակ ու հիմնավոր ձևակերպումը որպես ընդունված հարացույց կամ դրա մաս:

Գևորգ Գ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ձշմարտության և արդարության հիմնահարցերը, միջգիտակարգային տիրույթի և հոգևոր մշակույթի ձևերի միջև առկա հակա-

35 Տե՛ս **Wittgenstein L.**, Tractatus Logico-Philosophicus, London and New York, Taylor & Francis e-Library, 2002, էջ 68 (ebook):

մարտությունները, ինչպես նաև լեզվատրամաբանական հիմնախնդիրները: Ունի մեկ տասնյակից ավելի գիտական ու հրապարակախոսական հոդվածներ և մեկ մենագրություն:

Էլ. հասցե՝ gevorg.hakobyan82@gmail.com

Summary

ON ONE LEXICOGRAPHICAL QUESTION

In the context of the philosophical problematic field

Gevorg G. Hakobyan

Keywords – obligation, errors, point out /not point out, spread and/or strengthen errors, paradoxical situation, paradigm, word, language, lexicographer, lexicography.

The subject of this analysis is the problem of the (moral, political, scientific, etc.) obligation of demonstration/not demonstration of existing or possible errors in all kinds of spheres of human activity.

At first glance, it seems clear and self-evident that any errors that exist or are possible in human relations must be revealed, educed and eliminated. And if this process of elimination requires that the existence of the error be publicly announced, then this demand also has to be met. But this seems true only at a glance.

Actually, revealing the errors is fraught with the danger of deepening, spreading, and/or strengthening those errors. That is, it is quite possible that when we point out the errors, it will lead to the exact opposite result.

Taking into account this circumstance, it can be insisted that there is a paradoxical situation. Namely, the errors have to be pointed out to be eliminated or at least neutralized, but at the same time, the errors do not have to be pointed out to be eliminated or at least neutralized.

By all appearances, this is the essence of the problem of the obligation of demonstration/not demonstration of errors, which also exists in lexicographical processes.

It is self-evident and many lexicographers also explicitly claim that the purpose of a dictionary is to demonstrate the truth and not the errors. Nevertheless, there are many cases when the lexicographers not only point out the errors and/or explain them in detail, but also put the wrong or inaccurate word in place of the correct headword.

This lexicographical practice can have many causes, perhaps the most predominant of which is the widespread use of the wrong word at the expense of obscuring the right one. Lexicographers sometimes intentionally make the wrong or even non-existent word a headword, being sure that if the correct word was put in place of the headword, the reader would not be able to find it, because the reader only knows the wrong version of that word and will eventually search for its wrong version. In these and other cases of pointing out errors, the errors can be spread, deepened, and/or more strengthened: a result against which (among others) any scientific practice as well as lexicography is directed. And here a question arises. How can we deal with the abovementioned paradoxical situation?

Overcoming this situation is very important, as lexicography has a significant impact on both the speed and direction of the development of the (Armenian) language.

It is clear that there can be more than one way to achieve a possible solution to the problem, but in the article it is suggested to deal with this situation by constructing a conventional paradigm and making it public, as the most common or perhaps the only way to get rid of paradoxical situations is the conventionalist approach.

Резюме

ОБ ОДНОМ ЛЕКСИКОГРАФИЧЕСКОМ ВОПРОСЕ

В контексте философского проблемного поля

Геворг Г. Акопян

Ключевые слова - должное, ошибки, указывать/не указывать, распространять и/или закреплять ошибку, парадоксальная ситуация, парадигма, слово, язык, лексикограф, лексикография.

Предметом данного анализа является проблема необходимости выявления/не выявления существующих или возможных ошибок в любой сфере человеческой деятельности. На первый взгляд кажется ясным и само собой разумеющимся, что любая ошибка, существующая или возможная в человеческих отношениях, должна быть выявлена, определена и устранена. И если этот процесс требует, чтобы ошибка была объявлена публично, тогда это требование также должно быть выполнено. Но это только на первый взгляд.

На самом деле любая огласка ошибки таит в себе опасность углубления, распространения и/или усиления той же ошибки. То есть вполне возможно, что указание на ошибку приведет не к ее устранению, а к прямо противоположному результату.

Принимая во внимание это обстоятельство, можно утверждать, что здесь мы сталкиваемся с парадоксальной ситуацией. То есть на ошибку нужно указать, чтобы ее устранить и/или хотя бы нейтрализовать, но в то же время на ошибку нельзя указывать, чтобы ее устранить и/или хотя бы нейтрализовать.

По большому счету, в этом и состоит суть проблемы необходимости выявления/невыявления ошибок, которая также присутствует в лексикографическом процессе.

Некоторые лексикографы эксплицитно заявляют, что цель словаря – показать то, что правильно, а не показывать ошибки. Однако есть ряд случаев, когда лексикограф не только указывает на ошибку и/или подробно разъясняет ее, но и на место заглавного слова ставит неправильное или нерекондуемое слово.

Эта лексическая практика может иметь множество причин, важнейшей из которых, пожалуй, является широкое употребление неправильного слова за счет редкого употребления/затенения правильного слова. Лексикограф намеренно записывает неправильное или даже несуществующее слово на место заглавного, потому что уверен, что если правильное слово поставить на место заглавного, читатель не сможет его найти, потому что он знает только неправильное слово и будет искать ту словесную версию слова, которую знает.

В этих и других случаях указание на ошибку может распространяться, углубляться и/или закрепляться – результат, против которого (среди прочего) направлена как любая научная практика, так и лексикография. И тут возникает вопрос: «Как преодолеть эту парадоксальную ситуацию, если это вообще возможно? А выход из такой ситуации очень важен, потому что лексикография оказывает существенное влияние как на скорость, так и на направление развития армянского языка.

Понятно, что путей достижения возможного преодоления этой ситуации может быть много, но в статье предпочтение отдается созданию условной парадигмы и оглашению последней, потому что наиболее распространенным, а может быть, и единственным способом выхода из парадоксальной ситуации является конвенционалистский подход.

REFERENCES

1. “Lezvi masin” Hayastani Hanrapetut‘yan ðrenk‘um lrats‘umner katarelu masin Hayastani Hanrapetut‘yan ðrenk‘ë, Ëndunvats ë 2018 t‘vakani marti 23-in, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120963> (In Armenian).

2. “Zhamanakakits‘ hayots‘ lezvi bats‘atrankan bařaran”, H. Acharyani anvan lezvi institut, Yer., Haykakan SSH Gitut‘yunneri akademiayi hrat., 1969 (**In Armenian**).
3. **Achařean H.**, Hayerēn armatakan bařaran, hat. A, Yer., Yerevani hamalsarani hrat., 1971 (**In Armenian**).
4. **Adorno T. L. V.**, Esteticheskaja teorija, M., “Respublika”, 2001 (**In Russian**).
5. **Aghayan Ē. B.**, Ardi hayereni bats‘atrankan bařaran, Yer., “Hayastan”, 1976 (**In Armenian**).
6. Astvatsashunch‘, Nor Ktakaran Hisus K‘ristosi yev Saghmosner, Ashkharhabar nor t‘argmanut‘yun, Yer., Hayastani Astvatsashnch‘ayin Ĕnkerut‘yun, 2007 (**In Armenian**).
7. **Awetik‘ean G., Siwrmēlean Kh., Awgerean M.**, Nakhadrunk‘, “Nor bargirk‘ haykazean lezui”, hat. ařajin, Venetik, Tparan I Srboyn Ghazaru, 1836 (**In Armenian**).
8. **Gyurjinyan D. S.**, “Lezvak‘aghak‘akanut‘yun” yezruyt‘i Ĕndhanur bnut‘agirĔ, “Lezvabanakan terminabanut‘yan harts‘er”: Hanrapetakan gitazhoghovi nyut‘er (25 hoktember, 2019), prak A, Yer., 2020 (**In Armenian**).
9. **Gyurjinyan D. S.**, Balt‘iakan lezuni hayeren anunneri tarberakaynut‘yan masin, “Lraber” has. git., Yer., “Gitut‘yun”, 2021, N 2 (662) (**In Armenian**).
10. **Gyurjinyan D. S.**, Hanun mer nyardereri: Grařumner hayots‘ lezvi aysorva khndirneri masin, Yer., “Ĕdit‘ Print”, 2019 (**In Armenian**).
11. **Hakobyan G. G.**, A poria, “Andrey Tarkovski, hodvatsneri zhoghovatsu”, Yer., Heghinakayin hrat., 2013 (**In Armenian**).
12. **Hakobyan G. G.**, Koronavirusayin hamavaraki khosuyt‘i imats‘abanakan vorakman shurj, “Banber Yerevani hamalsarani. P‘ilisop‘ayut‘yun, hodgebanut‘yun”, Yer., YEPH hrat., 2021, N 1 (34) (**In Armenian**).
13. **Hakobyan G. G.**, P‘ilisop‘ayut‘yan yev iravak‘aghak‘akan khosuyt‘i kapĔ, “Gitakan hodvatsneri zhoghovatsu”, girk‘ 10 (02), Yer., YEH hrat., 2019 (**In Armenian**).
14. **Kant I.**, Pataskhan harts‘in` inch‘ Ĕ lusavorakanut‘yunĔ, “HayastanĔ Yevropayi chanaparhin, Ink‘nut‘yun 2”, Yer., “Antares”, 2005 (**In Armenian**).
15. **Khach‘aturean A., Gangruni H. yew Tōnikean P‘. K.**, Yařajaban, “Hayots‘ lezvi nor bařaran”, Pēyruť, “K. Tōnikean yew Vordik‘ Hratarakch‘atun”, 1968 (**In Armenian**).
16. **Malkhaseants‘ S. S.**, Hayerēn bats‘atrankan bařaran, hat. 1, 3, Yer., Haykakan SSH Gitut‘yunneri akademiayi hrat., 1944 (**In Armenian**).
17. **Manasjan A. S.**, Metodologicheskije principy ob‘jektivnosti nauchnogo znaniya I jedinstvo nauki, Jer., “Gitutjun”, 2002 (**In Russian**).
18. **Russo Zh.-Zh.**, Rassuzhdenije o naukax I iskusstvax, Sposobstvovalo li vozrozhdenije nauk I iskusstv uluchsheniju nravov?, “Istoriko-pedagogicheskij zhurnal”, Nizhnij Tagil, Nauchnoje izdanije FGBOUVPO, Nizhnetagil’skaja gosudarstvennaja social‘no-pedagogicheskaja akademija, 2012, N 2 (**In Russian**).
19. **Vardanyan K. Ye.**, Partadrvats suits‘idner, “Banber Yerevani hamalsarani. P‘ilisop‘ayut‘yun, hodgebanut‘yun”, Yer., YEPH hrat., 2020, N 3 (33) (**In Armenian**).